

Իրավունք մշակույթ

Չկա Հասարակության
անանց իրավունքի
Ubi societas ibi jus

Ե Ր Կ Ղ Վ Ք Պ Ք Պ Ք Պ Ք
թիվ 12 (15)
2007 թ. հոկտեմբերի 15

ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ԴՈՄԱՐԻՏ ՃԱՆՊԱՐՔՐ

Վանաձորի Սր. Նարեկ առաջնորդանիստ եկեղեցում
Տեր Վահան բահանա Ագաթյանի
2007 թ. հոկտեմբերի 7-ի բարոզը մատուցած պատարագի ընթացքում

«ՔՈՆՑԵՆՏ ըՍԵ ԾԵՎ՝ ՄԵՆՆԵՒԼՈՒ, ՔԵ ՄՈՒՆ՝ ԵՐ ՈՍԿԻՆ ԻՎՎԱԿՈՒԻ ՄԵՐ: ՓՈՐԾԵՆՏ ԸՍԵ ԾԵՎ. ՔՐԻՍՏՈՍԻ ԵՆԵՐԿԱՅՐՈՒՄԸՆՐ ԳՐՈՒՆ՝ ԵՐ ԾԵՐ ՄԵՐ, ՔԵ՝ ՎԱՐՊԱԿԵՍ ԵՐԱ ՄԱՆՈՒՆ ԵՐ ԿՐՈՒՆ» (Բ. ԿՐԻՍՏ. 13:5):



Այսպիսի նախագուշացող խոսքերով կորնթացիներին վերջին պատգամներն էր ուղղում Պողոս սրբազան առաքյալը և հաստատապես ուզում էր իմանալ, հանգիստ լինել՝ բազմաթիվ ճանաչներում գրված իր բոլոր խոսքերի համար. արդյո՞ք կորնթացիները գործածում են դրանք: Ասում էր՝ հոգ չէ, թե մենք այսքան խոսքերից հետո ծանծաղցնող, խրատող կամ ապատկող երևանք: Կարևորն այն է, որ դուք ուղղվեք, որ դուք լավ լինեք: Ոչինչ, որ մենք անպիտան կհամարվենք այդ բարի գործի համար: Առաքյալն ուրիշի հաջողությանը է պայմանավորում իր երջանկությունը:

Որքանով է մեզ անհրաժեշտ հաջողությունը:
Ամեն մեկս փափագում ենք հաջողության մեջ գտնվել: Խիստ կարիք ունենք հաջողության կյանքով ապրել և հաճախ ենք այդ հաջողության մեջ էլ տեսնում ենք երջանկությունը: Կյանքի համար շատ կարևոր բաներ են դրանք, որոնք շարունակ արտասանում ենք. միմյանց մտաթուև ենք երջանիկ ամուսնություն, երիտասարդություն, հաջողակ գործեր, հաջողակ թիզներ, տարբեր գործերում հաջողությունների առատացում, որովհետև կարծում ենք, որ

իննց դրանցում է երջանկությունը:
Երջանկության գրավականը, սակայն, աշխարհիկ կարողության մեջ չէ: Երեկից դրանց մեջ մի փնտրեք երջանկություն, որովհետև այդ երջանկությունն անցողիկ է, պատահական ու պատենապաշտ:

Ո՞նանք կասեն՝ «ի՞նչ է, չուրախանա՞նք աշխարհում ունեցած հաջողությունների համար»: Զավ լինի: Աշխարհում հաջողությունները բազմապիսի, բազմատեսակ են: Եթե անհրաժեշտ է որևէ գործողությանը զորացնել եկեղեցին կամ օգտակար գործով հանուն հավատքի անդապնդման գրավակնել մեկին, և դա հաջողվում է, ապա դա հաճելի է Աստծո համար. ահա այստեղ թևածում է արդեն հոգևոր հաջողությունը, որը մեր նպատակն է հանդիսանում՝ ունենալ հաջողություն, որից էլ երջանկություն է թխում: Ապրում ենք երջանկություն և փորձում ենք այն հարատև դարձնել մեզ համար, այն է թե՛ այդ հաջողությունը փորձում ենք ծեռք բերել, ունենալ, ամրացնել, նախանձախնդիր կերպով պահպանել, որովհետև դա մեզ երջանկություն է պարզում:

Հաճախ հաջողությունը տեսնում ենք երկար տարիների առողջություն ունենալու մեջ՝ առանց մտածելու, որ միտուցե Աստված հիվանդություն է տվել, որպեսզի մեր ապաշխարությունն էլ ավելի լիարժեք լինի: Մենք, անընդհատ մեր առողջության հետևից ընկնելով, ձգտում ենք առողջ լինել, մարդկանց մաղթում... առողջ լինել: Այո, հիրավի, առողջությունն անհրաժեշտ է ամենքիս: Մեր գործերի հաջողությունը նաև մեր առողջությունից է կախված, բայց և չենք կարող կատարելապես իմանալ Աստծո կամքը. արդյո՞ք մեր հիվանդության մեջ չէ այն ապաշխարության գրավականը, որով բազմաթիվ մարդիկ պետք է երջանկանան, արդյո՞ք այդ հաջողության բանալին մեր հիվանդության մեջ չէ: Ու թե չեն համարում, որ ապաշխարությունը հաջողության համար է, տրոսնում, նվնվում, բանբասում, հայիոյում են անընդհատ իրենք իրենց, իրենց հարազատներին, եկեղեցուն, Աստծուն: Հիշենք այն հիվանդության մասին, որ Հոբը խոնարհաբար կրեց: Հոբը չգնաց այս կամ այն մարդկանց մոտ բժշկվելու, Հոբը իր ընտանիքի անդամներին չասաց՝ ինձ էլ պատգարակով տարեք այսինչի մոտ, որպեսզի ես էլ բժշկվեմ: Երջանիկ էր Հոբը իր հիվանդության մեջ, որովհետև նա գիտեր՝ դա առիթ էր անդադար, անխախտ կերպով հաղորդակցվելու Աստծո հետ: Նա երջանիկ էր, որ հաջողություն ունի անընդհատ Աստծո հետ խոսելու, երջանիկ էր, որ հաջողեցրել է իր գործով և խոսքով մարդկանց դարձի բերել, այդ պատճառով վստահ գիտեր. «Իմ մեղքերը չեն, որ ինձ բերել են այս օրվան, այլ Աստծո արդարությունը»:

Դավիթ Անհաղթ

... Երջանիկ է նա, ով ապրում է առաքինությանը համապատասխան, չի տրոսնում ո՛չ մարմնական փորձովթյունների, ո՛չ էլ արտաքին բաների համար, այսինքն ունեցվածքի:



Հաղթանակեց արդարությունը

Ինչպես հայտնի է, սոցիալական քարտերի համակարգի ներդրումը մեծ վնաս է հասցրել նաև բազմաթիվ գործարարների: Լոռու մարզի Լեռնոնտով գյուղի բնակիչ, անհատ ձեռներեց Արտակ Փարսադանյանը ՍԱԴԳ Վանաձորի տարածքային կենտրոնի կողմից ենթարկվել էր վարչական տուգանքի՝ 20.000 դրամի չափով՝ առանց սոցիալական քարտի համարի նշումի հաշվետվություն ներկայացնելու համար:

Թեև ՀՀ Սահմանադրական դատարանի 2006թ. հոկտեմբերի 4-ի որոշմամբ սոցիալական քարտերն այլևս պարտադիր չեն, սակայն Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը փորձում էր գործարարից բռնագանձել հանրավիճիկ և անարդարացի տուգանքը:

Եվ ահա Լոռու մարզի առաջին ատյանի Վանաձորի նստավայրի դատարանը 2007թ. հոկտեմբերի 11-ին վճռեց բավարարել անհատ ձեռներեց Արտակ Փարսադանյանի հայցը և անվավեր ճանաչեց ԴԱԳԿ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

Հաղթանակեց արդարությունը: Գործարարը պայքարեց և կարողացավ պաշտպանել իր շահերն ու մարդկային անկապտելի իրավունքները: Նրա կեցվածքն ու քաղաքացիական ակտիվությունն արժանի են ընդօրինակման:

Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում	էջ 2
Հարավի ուսուցիչների առաջատարը	էջ 3
Պաշտպանենք խուլերի կրթության և մասնագիտություն ստանալու անկապտելի իրավունքները	էջ 3
Գյուղական դպրոցը դասարանակազմության և իրավունքի թնջուկում	էջ 4
Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները «Բյուրական» կրթահամալիրում	էջ 5
Քեզ բարի երթ, հավերժի ճամփորդ	էջ 6
Եշմարիտ աղոթքի լույսը	էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ	էջ 8

Մենք՝ քաղաքացիական Հանարակույթյունը

Հարավի

ուսուցիչների առաջադարձը



«Գորիսի ուսուցիչների միություն» (ԳՈՒՄ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ. սեպտեմբերին: 2003թ. 34-ն հիմնել է ԳՈՒՄ ՄՊՈ-ն՝ տարանջատելով ֆինանսական և գործառնական ծառայությունները: 34-ի գրասենյակը գործում է Գորիս քաղաքի կենտրոնում գտնվող, հանդիպումների և համաժողովների սենյակներով, խոհանոցային հարմարություններով, համակարգչային և աուդիո-վիդեո կենտրոններով հագեցած եռահարկ կառույցում: Ուսուցիչ տանը տեղակայված են նաև տարբեր կրթական կազմակերպությունների ներկայացուցչություններ: Ուսուցիչ տանը գտնվում են 33 ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի Սյունիքի մասնաճյուղը, «Գորիսի ուսուցիչների միություն» 34-ի գլխավոր գրասենյակը, «Այրեքսի Գորիսի հաբը», «Գորիսի Սուդո-վիդեո կրթական կենտրոն»-ը («Խաղաղության կրթություն» և «Գորիսի ուսուցիչների միություն» կազմակերպությունների համագործակցությամբ), «Ուսուցիչ» կրթական թերթի խմբագրությունը, «Թրանսփարենսի ինքնընտելչել» հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Գորիսի ներկայացուցչությունը: Վերոբնակարկայի կառույցները ակտիվ համագործակցում են միջազգային և տեղական հասարակական, պետական կազմակերպությունների հետ՝ նպաստելով կրթական բարեփոխումների գործընթացին:

34-ի նպատակներն են.
* Ուսուցիչների և մանկավարժական հաստատությունների ուսանողների համար կազմակերպել նոր մեթոդաբանության և հմտությունների ուսուցման դասընթացներ:
* Ուժեղացնել դպրոցական խորհրդի գործունեությունը, նպաստել նրանց ժողովրդավարացմանը և գործունեության ընդլայնմանը:
* Կրթական և համայնքի կարիքների համար խթանել համագործակցային լուծումները:
* Համայնքի անդամների համար ապահովել կրթության հնարավորություն:



34-ն 2006թ. սեպտեմբերի 1-ից «Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության» և «Քաղաքացիական հասարակության» և համայնքային ժողովրդավարության աջակցություն Հարավային Կովկասում» ծրագրերի շրջանակներում իրականացրել է «Տեղական ինքնակառավարումը մեր համայնքում» ծրագիրը:

Կրթություն և հասնագործակցություն հանուն քաղաքացիական հասարակության

Գիրը: Ծրագիրն իրականացվել է Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապան, Մեղրի և Քաղաքացիական քաղաքների դպրոցների աշակերտական խորհուրդների անդամների մասնակցությամբ: Աշակերտների կողմից վերահսկված իմնադրությունների հիման վրա ծրագրերը ֆինանսավորվել են Գերմանական տեխնիկական համագործակցություն ընկերության կողմից (յուրաքանչյուր քաղաքում մշակվել է մեկ ծրագիր), և յուրաքանչյուր քաղաքի քաղաքապետարան նույնպես ներդրում է կատարել՝ դոնորի կողմից հատկացված 500 եվրոյի համարժեք դրամի առնվազն 20%-ի չափով:

34-ն ուսուցիչների համակարգչային գրագիտության ուղղությամբ վերապատրաստման դասընթացների շրջանակներում 2005թ. փետրվար-ապրիլ ամիսներին «Համաշխարհային բանկ»-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի ֆինանսական աջակցությամբ կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ Սյունիքի մարզի դպրոցներում ինֆորմատիկա, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ռուսերեն, անգլերեն, կենսաբանություն և աշխարհագրություն դասավանդող 64 ուսուցիչների համար՝ ըստ մարզապետարանի կրթության վարչության ներկայացրած ցուցակի:

«Խաղաղության կրթություն» և «Բրիտանական խորհուրդ» կազմակերպությունների համագործակցությամբ կազմակերպվել է անգլերենի ուսուցիչների համար վերապատրաստման դասընթաց, որին Գորիսի տարածաշրջանից մասնակցել են 21 ուսուցիչներ:

Վերցված է ԳՈՒՄ-ի կայքէջից

ՊԱՇՏՊԱՆՆԵՐՔ ԽՈՒՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԼՈՒ ԱՆԿԱՊՏԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



21-րդ դարում, երբ ամենուր խոսվում է մարդկային իրավունքների և շահերի պաշտպանության մասին, հասարակության խոցելի խմբերից մեկի խուլերի իրավունքների պաշտպանությունը, կրթության ապահովումը և մասնագիտության ձեռք բերումը կարծես թե ջեռին է մտահոգում:

Լոռու մարզում ապրող 200 խուլերից 120-ն ապրում են Վանաձորում, որոնց զգալի մասը երեխաներ ու երիտասարդներ են: Լինելով հասարակությունից որոշակիորեն մեկուսացված՝ խուլերը կարիք ունեն ընկերության և ժամանակակից քաղաքացիական անցյալից մեկուսացվելու, բանգի նրանք ևս մեր հասարակության լիիրավ անդամներ են՝ նույն անկապտելի իրավունքներով ու պարտականություններով: Խուլերի հաղորդակցման առաջին և անհրաժեշտ միջոցը ժեստերի լեզուն է: Սակայն այդ լեզվի ուսուցման միակ դպրոցը գտնվում է Երևանում, որտեղ էլ գործում են խուլերի մշակույթի պալատն ու որոշ արտադրամասեր: Լինելով սոցիալապես անպահով վիճակում՝ խուլերից շատերը հնարավորություն ունեն ուսանել Երևանում: Խուլերի համար անհրաժեշտություն է գիտելիքի և մասնագիտության ձեռք բերումը, որը կօգնի աշխատանք կամ օգտակար զբաղմունք գտնել, հասարակության ինտեգրվել և հասարակական կյանքին լիարժեք մասնակցություն ունենալ: Այցելությունները բանագարաններ ու մշակութային այլ օջախներ և ուխտագնացությունները դեպի արբանյակներ կընձեռեն հոգևոր-մշակութային արժեքների ծանոթանալու և հաղորդակցվելու հնարավորություններ:

Այս ամենը կարևորելով՝ Գուգարաց թեմի առաջնորդարանը տարիներ շարունակ աջակցում է խուլերի ընտանիքներին՝ նրանց երեխաների ամառային հանգիստը

կազմակերպելով թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում:

Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ 2007թ. հուլիսի 1-ից թեմում իրականացվում է «Ստեղծե՛ք հնարավորություններ խուլերի համար» ծրագիրը: Ծրագրի նպատակն է խուլ երիտասարդներին ինտեգրել հասարակությանը՝ բարելավելով նրանց հոգևոր և հոգեբանական, կրթական-մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաև հասարակությանը ծանոթացնել խուլերի կյանքին և խնդիրներին:

Ծրագրի առաջին խմբում ընդգրկված են Վանաձոր



քաղաքում բնակվող 10-35 տարեկան 20 խուլեր: Որպես երկրորդային շահառուներ հանդես են գալիս խուլերի ընտանիքների անդամները: Նրանց համար կազմակերպվում են ժեստերի լեզվի ուսուցման, համակարգչային, քրիստոնեական և հոգևոր մշակույթին վերաբերող դասընթացներ, վարսահարդարման, ձեռքի աշխատանքների դիզայնի և անեղնագործության խմբակներ, անհրաժեշտության դեպքում իրականացվում են իրավաբանական խորհրդատվություններ: Նախատեսվում են ուխտա

գնացություններ և այցելություններ հոգևոր ու մշակութային օջախներ, ինչպես նաև հոգևոր և կրթամշակութային միջոցառումներ:

Ծրագրի կարևորագույն խնդիրներից մեկը ժեստերի լեզվի բազային ուսուցման եռամսյա դասընթացների կազմակերպումն է ինչպես խուլերի ընտանիքների անդամների, այնպես էլ ծրագրի աշխատակազմի, հոգևորականների, 34-ների ներկայացուցիչների և բոլոր այն շահագրգիռ անձանց համար, ովքեր պատրաստ են աշխատելու խուլերի հետ, չփվելու նրանց հետ: Ժեստերի լեզվի իմացությունը հասարակության լսող և խուլ անձանց փոխադարձ կապի կարևորագույն միջոցն է: Այս է պատճառը, որ նախատեսված 10-ի փոխարեն արդեն 40 մարդ է ընդգրկված բազային այդ դասընթացում: Ժեստերի լեզվի բազային ուսուցման մասնագետը «Հայաստանի խուլերի միավորում» 34 կենտրոնական վարչության հրահանգիչ-քարոզմանիչ Ջուլետյան Սելիթյանն է, ով նաև «Հայկական ժեստերի լեզվի բարարան»-ի և «Ժեստերի լեզվի հոգևոր բարարան»-ի համահեղինակներից է:

Ծրագիրն իրենց ակտիվ մասնակցություն են ունենում թեմի եկեղեցու երիտասարդաց միության անդամները, ովքեր կամավոր դասավանդում են ձեռքի աշխատանքներ, կազմակերպում հանդիպումներ խուլ երիտասարդների հետ:

Դուստվ ենք այս ծրագիրը մեր հասարակության համար խթան կհանդիսանա հետապույտ ոչ միայն առավել ուշադիր լինելու խուլերի նկատմամբ, այլև նրանց հետ առնչվելու, չփվելու, ինչպես դա արվում է հասարակության մյուս անդամների հետ:

ՍԱՏՐԻԿ ԱՍՐՅԱՆ
Գուգարաց թեմի քարոզական և սոցիալական ծրագրերի պատասխանատու, «Ստեղծե՛ք հնարավորություններ խուլերի համար» ծրագրի ղեկավար

Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները «Բյուրակն» կրթահամալիրում



«Բյուրակն» կրթահամալիրը հիմնադրվել է Երևանում և գործում է արդեն 4 տարի: 2006թ. սեպտեմբերից Վանաձոր քաղաքում գործում է «Բյուրակն»-ի Վանաձորի ուսումնական խումբը: Դպրոցն իր գոյության իրավունքն ապացուցել է իր իսկ աշխատանքի արդյունավետությամբ: Դպրոցում ուսուցումը կազմակերպվում է համագործակցային եղանակով: Փորձեց ներկայացնել համագործակցային ուսուցման հիմնական առանձնահատկությունները մասնավորապես տարրական դպրոցում:

1. Անհատական ուսումնական ծրագրերի առկայություն:

Ուսուցման ողջ գործընթացը տարվում է 33 կառավարության կողմից 2004թ. մայիսի 27-ին հաստատված «Հանրակրթության պետական կրթակարգ»-ով և սահմանված կրթական չափորոշիչներին համապատասխան: Յուրաքանչյուր առարկայի համար մշակվում է թեմատիկ ծրագիր, որ նույն է բոլոր աշակերտների համար: Սակայն հաշվի առնելով աշակերտների անհատական առանձնահատկությունները՝ յուրաքանչյուրի համար կազմվում է անհատական երթուղի, որ իրենից ներկայացնում է ուսումնասիրվող թեմաների հերթականությունը: Առավելությունն նաև այն է, որ ծրագրից յուրացնելու համար չկա ժամանակային սահմանափակում: Սովորողը, կաշկանդված չլինելով մյուս աշակերտների արագությամբ, հնարավորություն ունի առաջանցիկ տեմպերով կամ ավելի դանդաղ առանց հապշտապության, ուսումնասիրել ուսումնական տարվա թեմատիկ ծրագիրը և ավելի կարճ կամ ավելի երկար ժամկետում, բայց պարտադիր ավարտել դրա պատշաճ յուրացումը: Օրինակ, 2006-2007 ուսումնական տարվա ընթացքում որոշ աշակերտներ առաջանցիկ տեմպերով անցել են մաթեմատիկայի և մայրենի լեզվի հաջորդ տարվա ուսումնական ծրագրի յուրացմանը:

2. Յուրաքանչյուր աշակերտ ոչ միայն սովորող է, այլև՝ սովորեցնող:

Կրթահամալիրի կարգախոսն է «Սովորեցրու, որ սովորես»: Ուսումնական նյութը յուրացվում է դպրոցում բուն ուսումնական գործընթացում: Չկան տնային աշխատանքներ: Յուրաքանչյուր աշակերտ ստանում է իր թեման, որը յուրացնում է զույգային աշխատանքի ընթացքում: Կիրառվում են Ռիվինի ուղիղ և հակադրված մեթոդները, անհատական փոխտուգման քարտերի, թեմաների փոփոխադրողման մեթոդները:

Ի՞նչ է տալիս զույգային աշխատանքը:

- ա. Դրսերովում են անհատական հատկանիշները, և հնարավորություն է ստեղծվում ուղղել ի հայտ եկած թերությունները կամ բացթողումները:
- բ. Նյութը յուրացվում է գուզընկերոջ «հսկողությամբ»:
- գ. Բարձրանում է պատասխանատվությունը իր և զուգընկերոջ աշխատանքի համար: Աշակերտը երբեմն գնահատվում է ոչ թե իր, այլ զուգընկերոջ յուրացրած նյութի համար:
- դ. Երեխան գիտակցում է իր տեղը, դերը, կարևորությունը աշխատանքի ընթացքում, որը բարձրացնում է նրա ինքնավստահությունը:
- ե. Ներպարփակված աշակերտները նպաստավոր միջավայր են ստանում անկաշկանդ որևէ ուղիով իրենց և օգնելով զուգընկերոջը խոսել, չվիպել, մտքեր փոխանակել ազատելով թերադժեքության և այլ բարդոյթներից:
- զ. Ձույգային աշխատանքի ժամանակ զարգանում է լսելու կարողությունը, հարգանքը դիմացիների կարծիքի նկատմամբ, ընդհանուր որոշումներ կայացնելու կարողությունը:
- է. Ձարգանում է երեխայի ստեղծագործական միտքը, խթանվում տրամաբանական մտածողությունը:

3. Պնաստան համակարգ:

Պնաստանում կատարվում է համաձայն կրթակարգային չափորոշիչների: Չկա գնահատման հինգ բալլային համակարգ: Համակարգում կան բոլոր առարկաների թեմատիկ ծրագրերը և աշակերտների ցանկը: Ամսվա կամ շաբաթվա ընթացքում կետերով նշվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսումնական ծրագրի թեմաների հերթականությունը:

Յուրաքանչյուր թեմա յուրացնելուց հետո աշակերտը մտնում է կառավարման վահանակին, որտեղ ստուգվում է թեմայի յուրացումը: Թեման համընդունելի է հետո խաչաձև նշում է կատարվում, իսկ երբ աշակերտն այդ թեմայի համար սովորեցնող է հանդես գալիս, խաչը վերցվում է օղակի մեջ: Սրան զուգահեռ կազմված են ընթացիկ և ավարտական թեստեր, որոնց միջոցով ամրապնդվում են գիտելիքները: Ընդունելի է համարվում միայն զերազանց պատասխանը, հակառակ դեպքում աշակերտը չյուրացված նյութը կրկին է ուսումնասիրում և նորից ստուգվում: Տարրական դպրոցի բոլոր առարկաները զերազանց համընդուն աշակերտները ստանում են տարրական դպրոցի շրջանավարտի վկայական անկախ նրանից տարին ավարտել է, թե ոչ:

Պնաստանն այս համակարգը բացառում է անառողջ մրցակցությունը բարձր գնահատական ստանալու համար: Քանի որ գնահատվում է նաև սովորեցնելու կարողությունը, աշակերտները ձգտում են կայուն, հիմնավոր և լիարժեք գիտելիքներ ստանալ, ոչ թե միայն պայքարել բարձր գնահատականի համար: Ուսումնական տարվա կեսին մենք արդեն ունենինք աշակերտների ինքնակատարվող խումբ, որը մասնակցում է ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Իսկ տարրական դպրոցն ավարտող 2 աշակերտներ զերազանց արդյունք դրսերեցին տարեկերջյան քննությունները հանձնելով Երևանի «Բյուրակն» կրթահամալիրում:

ՌՈՒՋՆՆԱՎ ՎԱՐՎՆԱՅԼ
«Բյուրակն» կրթահամալիրի
Վանաձորի ուսումնական խմբի դասավարդ

Մասնակցությունն ինքնին նվաճում է

Մարդու իրավունքները կարելի է ուսումնասիրել նաև սեփական փորձի հիման վրա: Դպրոցական առօրյա կյանքը կարող է դառնալ այն միջավայր, որտեղ կերակվեն այնպիսի իրողություններ, ինչպիսիք են համընդունականությունը, արդարամտությունն ու օրինապահությունը: Սակայն դպրոցներում մարդու իրավունքների պաշտպանության ավելի շուտ հավաստում են, քան նպատու: Օրինակ, եթե աշակերտները ազգային փոքրամասնության պատկանող այլ աշակերտների համար մականուններ են հորինում, և ուսուցիչները դիմել են մեծարկուն դրա դեմ, ապա երեխաների մտ, քննամասքար, այն կարծիքն է



մակարդվում, թե այլազգիների հանդեպ ծաղրանքն ու անհանդուրժողականությունն ընդունելի է ու պատշաճ:

Դասարանական և համադպրոցական կանոնների մշակման գործընթացին պետք է մասնակցի դարձնել նաև աշակերտներին: Եթե աշակերտները մասնակցեն դպրոցական կանոնների մշակման, ինչպես նաև դրանց խախտումների դեպքերում համապատասխան միջոցների կիրառման կանոնների քննարկումներին և ընդունմանը, ապա դրանց մոտ կենսավորվի իրենց իսկ մշակած կանոնների նկատմամբ պատասխանատվության զգացում: Եթե աշակերտները որոշ կանոններ հասարակում են ավելորդ, անարդար կամ անհիմն, ինչու՞ թույլ չտալ նրանց փոփոխություններ կատարել դրանցում: Դպրոցական կանոններն անհրաժեշտություն են, եթե մենք ցանկանում ենք խուսափել անկարգությունից ու քաոսից: Սակայն վարքագիծ յուրաքանչյուր կանոն պետք է հիմնավորված ու արդարացի լինի: Ուսուցիչները պետք է պատրաստ լինեն հարկ եղած դեպքերում «զիջումներ», քանի որ այդ կանոնների փոփոխությունները կբարձրացնեն դպրոցի կառավարման արդյունավետությունը: Չպետք է մոռանալ, աշակերտի՝ դպրոցի կառավարմանը մասնակցությունն ինքնին նվաճում է:

Կարևոր են նաև դասարանական ժողովները, որոնք կարող են նպաստել աշխատանքը պլանավորելուն, ծագած խնդիրների լուծմանը, աշխատանքների կազմակերպմանը: Ժողովների կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ դրանք օգնում են երեխաներին սեփական մասնակցությունը բերել տարբեր միջոցառումների:

Դպրոցի կառավարման բարելավման համար առանձնապես կարևոր է իրենց՝ ուսուցիչների վարքագիծը, պահվածքը, ինչու՞ չէ, նաև հազուադեպ, վերաբերմունքը աշակերտների նկատմամբ: Անհրաժեշտ է հիշել, որ աշակերտը սովորում է ոչ այնքան դասագրքով, որքան տեսնելով ու զգալով, թե ինչպես է վարվում իր հետ ուսուցիչը, և ինչպիսին է նրա վարքագիծը շրջապատում:

Յ. ԱՍԼԱՆՅԱՆ

Դա՛րձ դեպի դպրոց նշանաբանով



Համընդհանուր կոչ հանուն կրթության քարոզարշավի հայատանյան ազգային կապիցիան պատրաստվում է 2008թ. Համընդհանուր գործողությունների շաբաթվա, որը նախատեսված է 2008թ. ապրիլի 21-27-ին: Շաբաթվա ընթացքում նախատեսվում է դեպի դպրոց դարձի բերել կրթության ոլորտի պետական ղեկավարներին իրագրելու նրանց կրթության հասնելիքի համար օգնություն և համընդհանուր կրթության խնդիրների մասին:

Դպրոցները կարող են ներգրավվել՝ հրավիրելով կրթության ոլորտում պատասխանատու ՏԻՄ ներկայացուցիչի և տեղական ՁԱՄ-ների մասնակցելու վերոնշյալ թեմայով կազմակերպված դասին, պատրաստելով ուղղորդ պետական ներկայացուցիչի համընդհանուր կրթության պահովման պահանջով:


Ներգրավելով հնարավորինս շատ պետական գործիչներ, մեծաահասակների և երեխաների աշխարհի տարբեր երկրներում քարոզարշավը մտադիր է գերազանցել 2003թ. սահմանված պատմության մեջ ամենամեծ դասի համաշխարհային ռեկորդը՝ շուրջ 2 մլն մարդ:

Միացե՛ք 2008թ.-ի ապրիլին նախատեսվող ՀԳԿՀ Համընդհանուր գործողությունների շաբաթվա՝ հանուն համընդհանուր որակյալ կրթության. դարձ դեպի դպրոց:

ՏԵՂԵԿՈՒՅԹ - ԱՉԴ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային սեմինար Երևանում՝ բիոէթիկայի և մարդու իրավունքների թեմայով

2005թ. հոկտեմբերի 19-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովը ընդունել է Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին հռչակագիր:



Վերոնշյալ խնդիրների հրատապությունից ելնելով՝ Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովը (գլխավոր քարտուղար Համբարձում Սինայան) 2007 թ. հոկտեմբերի 2-3-ին Երևանի պետական ակադեմիայի կազմակերպությամբ միջազգային սեմինար՝ Հայաստանում բիոէթիկայի հարցերով ազգային հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ:

10-14 տարեկան երեխաների համաշխարհային խորհրդատուական Նորվեգիայում 2008թ. փետրվարի 17-21

«Իրավական մշակույթ»-ի 10-րդ համարում զրել էին Նորվեգիայի Սթեվենջոր քաղաքում նախատեսված երեխաների համաշխարհային խորհրդատուական մասին, որին մասնակցելու են աշխարհի տարբեր երկրների 700 երեխաներ և 300 ուղեկցող ուսուցիչներ:



http://www.unep.org/Tunza/Children/Events/icc_2008/application_form/index.asp

Հուսանք, որ Հայաստանից ևս երեխաներ կմասնակցեն այդ կարևոր խորհրդատուական:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2007թ. հոկտեմբերի 31:

Կրթության ոլորտում ամենամեծ հատկացումները կատարվում են ԱՄՆ-ում

Կրթության ոլորտում ամենամեծ հատկացումները կատարվում են ԱՄՆ-ում, որտեղ կրթության ծախսերը Սահարայի հարավային մասին մոտ զուգվող աֆրիկյան երկրներին համեմատելիս ավելի քան 10 անգամ ավելի են:

Մենք՝ բազմաբնույթի անարևելասերներ

Հարգելի՛ հասարակական կազմակերպություններ, «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը բացում է նոր խորագիր՝ «Մենք՝ բազմաբնույթի անարևելասերներ», որի ներքո պարբերաբար կներկայացվեն Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունները:

Form with fields for name, address, phone, and email for the 'We are multi-culturalists' section.

Form with multiple questions and checkboxes for the 'We are multi-culturalists' section.

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը:

Հրատարակության 9 տարի շնորհիվ և հրատարակչի՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի կողմից: